ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մեսրոպ Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) սահմանային հսկիչ կետերի համակարգման բաժնի պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա, Մոսկվայի մարզ, ք. Նալչիկ, ք. Վլադիկավկազ, գյուղ Վերին Լարս), 2023 թվականի հունիսի 26-30-ը:

3. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ռուսաստանի Դաշնության կարանտինային բուսասանիտարական հսկողության, հացահատիկի որակի և անվտանգության հսկողության, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ժամանակ կիրառվող պեստիցիդների լաբորատոր հսկողության համակարգերի, Վերին Լարս սահմանային անցակետի, Վերին Լարսում տեղակայված ժամանակավոր պահպանման մաքսային պահեստի աշխատանքներին ծանոթանալու նպատակով :

5. Քննարկված թեմաները.

Ռոսսելխոզնադզորի և նրա ենթակայության տակ գտնվող մարմինների աշխատակիցները մեզ ներկայացրին «Հացահատիկի որակի գնահատման կենտրոն» դաշնային պետական բյուջետային հաստատության Մոսկվա քաղաքի և Մոսկվայի մարզի մասնաճյուղի, «Բույսերի կարանտինի համառուսաստանյան կենտրոն» դաշնային պետական բյուջետային

հաստատության, «Հյուսիսային Կովկասի միջտարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիայի» Կաբարդա-Բալկարական Հանրապետության մասնաճյուղի, Վերին Լարս սահմանային անցակետի, Վերին Լարսում գյուղում տեղակայված «Լարս» ժամանակավոր պահպանման պահեստի, Ռոսսելխոզնադզորի դաշնային պետական տեղեկատվական համակարգերի աշխատանքների հետ և պատասխանեցին մեր պատվիրակության անդամների հարցերին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հունիսի 27-ի առաջին կեսին գտնվեցինք «Հացահատիկի որակի գնահատման կենտրոն» դաշնային պետական բյուջետային հաստատության Մոսկվա քաղաքի և Մոսկվայի մարզի մասնաճյուղում (այսուհետ՝ Մասնաճյուղ) և այնտեղ մեզ դիմավորեց Մասնաճյուղի տնօրենի տեղակալ Վիկտորյա Սուխովան: Վիկտորյա Սուխովան և Մասնաճյուղի այլ պաշտոնատար անձիք մեզ ուղեկցեցին Մասնաճյուղի բաժիններ ծանոթացնելով աշխատանքին, պատասխանելով մեր պատվիրակության հետաքրքրող հարցերին:

Հունիսի 27-ի երկրորդ կեսին գտնվեցինք «Բույսերի կարանտինի համառուսաստանյան կենտրոն» դաշնային պետական բյուջետային հաստատությունում (այսուհետ՝ Հաստատություն) և այնտեղ մեզ դիմավորեց Հաստատության տնօրենի առաջին տեղակալ Դենիս Զիննիկովը: Դենիս Զիննիկովը և Հաստատության այլ պաշտոնատար անձինք Հաստատության նիստերի դահլիճում մեզ ներկայացրին Ռոսսելխոզնադզորի «Արգուս ֆիտո», «Արգուս լաբորատորիա», «Արգուս վարակազերծում» դաշնային պետական տեղեկատվական համակարգերի հետ և պատասխանեցին մեր պատվիրակության հետաքրքրող հարցերին: Տեսանյութերի դիտելուց հետո Դենիս Զիննիկովի և այլ պաշտոնատար անձանց հետ շրջեցինք Հաստատության այլ բաժիններում ծանոթացանք Հաստատության աշխատանքներին և պատասխանեցին մեր պատվիրակության հետաքրքրող հարցերին: Դենիս Զիննիկովն իր պատրաստակամությունը հայտնեց Հաստատության ուսումնական կենտրոնում հայ մասնագետների համար կազմակերպել

վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացների պայմանները և ժամանակացույցը անհրաժեշտ է քննարկել լրացուցիչ:

Հունիսի 28-ին մենք գտնվեցինք Կաբարդա-Բալկարական Հանրապետության մայրաքաղաք Նալչիկում տեղակայված «Հյուսիսային Կովկասի միջտարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիայի» Կաբարդա-Բալկարական Հանրապետության մասնաճյուղում (այսուհետ՝ Լաբորատորիա) և այնտեղ մեզ դիմավորեց Լաբորատորիայի տնօրեն Խաութի Սոխրոկովը և տնօրենի տեղակալ Ժանետա Ժամուկովան: Տնօրենի աշխատասենյակում Լաբորատորիայի ստեղծման և գործունեության վերաբերյալ տեսանյութը դիտելուց հետո Ժանետա Ժամուկովան մեզ ուղեկցեց լաբորատորիայի բաժիններ ծանոթացնելով Լաբորատորիայի և Լաբորատորիային կից ուսումնական կենտրոնի աշխատանքներին և պատասխանեցին մեր պատվիրակության հետաքրքրող հարցերին: Հանդիպման ավարտին Լաբորատորիայի տնօրեն Խաութի Սոխրոկովն իր պատրաստակամությունը հայտնեց խորացնել Լաբորատորիայի և Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցների հետ համագործակցությունն առաջարկելով նաև հայ մասնագետներին վերապատրաստել Լաբորատորիայի ուսումնական կենտրոնում:

Հունիսի 29-ին գտնվեցինք Հյուսիսային Օսիայի Հանրապետություն – Ալանիայի մայրաքաղաք Վլադիկավկազի Վերին Լարս գյուղում գտնվող «Լարս» ժամանակավոր պահպանման պահեստում ծանոթացանք հայկական բեռների ձևակերպումներն իրականացնող պաշտոնատար անձնաց հետ, տեղում մասնակցենք բեռներից մեկի ձևակերպման գործընթացին և բուսասանիտարական լաբորատորիայի աշխատանքներին: Այնուհետև այցելեցինք «Վերին Լարս» սահմանային անցման կետ ծանոթանալով անցման գործընթացին: Այդ ընթացքում մեզ ուղեկցում էր Ռոսսելխոզնադզորի Հյուսիսային Կովկասի միջտարածաշրջանային վարչության Հյուսիսային Օսիայի Հանրապետություն – Ալանիայի բաժնի պետ Կազբեկ Մարզոևը: Կազբեկ Մարզոևը և «Վերին Լարս» սահմանային անցման կետի մյուս աշխատակիցները պատասխանեցին մեր պատվիրակության հետաքրքրող

հարցերին: Կազբեկ Մարզոևը հայտնեց նաև, որ իր կողմից ձեռնարկվել բոլոր քայլերը և տրվել են համապատասխան հրահանգները հայկական բեռների սահմանանցումը արագ կազմակերպելու համար: Հարկ եմ համարում նաև նշել, «Վերին Լարս» սահմանային անցման կետում Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն տեղափոխվող բարձր բուսասանիտարական ռիսկայնության բուսասանիտարական հսկողության ենթակա բեռների համար սահմանային պետական վերահսկողության արդյունքներով ձևակերպվում է բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ, իսկ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող բարձր բուսասանիտարական ռիսկայնության բուսասանիտարական հսկողության ենթակա բեռների համար 2023 թվականի մարտի 1-ից սկսած բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ չի ձևակերպվում, արդյունքում խախտվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Եվրասիական տնտեսական միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին» N 318 որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում» 3.19 կետի դրույթը:

Հունիսի 30-ին Մոսկվա քաղաքում գտնվող Ռոսսելխոզնադզորի գլխամասում մեր պատվիրակությանը ընդունեց Ռոսսելխոզնադզորի ղեկավարի տեղակալ Անտոն Կարմազինը: Փոխադարձ ողջույնների և շնորհակալական խոսքից հետո Անտոն Կարմազինը և Ռոսսելխոզնադզորի մյուս մասնագետները պատասխանեցին մեր պատվիրակության հետաքրքրող հարցերին, որից հետո ցուցադրվեցին տեսանյութեր Ռոսսելխոզնադզորի Դաշնային պետական տեղեկատվական համակարգերի վերաբերյալ: Ռոսսելխոզնադզորի ներկայացուցիչները և մենք շատ կարևորեցինք Տեսչական մարմնի և Ռոսսելխոզնադզորի համագործակցության խորացումը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Բոլոր վայրերում եղան բանավոր պայմանավորվածություններ զարգացնելու համագործակցությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում եմ գնահատել Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական և բուսասանիտարական պետական վերահսկողության մեջ ներգրաված պաշտոնատար անձանց, փորձարկման լաբորատորիաների մասնագետների վերապատրաստման կարիքները և նրանց համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով բանակցություններ սկսել Ռոսսելխոզնադզորի հետ: Բանավոր զրույցների ժամանակ Ռոսսելխոզնադզորի ենթակայության տակ գտնվող մարմինների համապատասխան պաշտոնատար անձինք հայտնում էին իրենց պատրաստակամությունը հայ մասնագետների համար ստեղծել նպաստավոր պայմաններ:

Ռոսսելխոզնադզորը մեծ հաջողությունների է հասել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական պետական վերահսկողության թվայնացման ուղղությամբ: Օրինակ անասնաբուժության բնագավառի «Վետիս» դաշնային պետական տեղեկատվական համակարգի «Մերկուրի» բաղադրիչի միջոցով տարեկան ձևակերպվում է 4 միլիարդից ավել անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր և արհեստական բանականության օգնությամբ հնարավոր է լինում պարզել այդ 4 միլիարդ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերից որոնք են ձևակերպվել խախտումներով: Առաջարկում եմ խորությամբ ուսումնասիրել Ռոսսելխոզնադզորի բոլոր դաշնային պետական տեղեկատվական համակարգերը և հաշվի առնելով մեր առանձնահատկությունները թվայնացնել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական պետական վերահսկողությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը 04. 07. 2023թ.